ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական
խորհրդի 24/06/2020թ. թիվ
143 նիստում

_____ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն քաղաքականությունը միտված է խթանելու ԳԿՄԿ-ում գիտական հետազոտությունների իրականացումը, վերջիններիս որակին , գիտական մտքի ապրանքայնացմանը:

Քաղաքականության մշակման անհրաժեշտությունը բխում է ԳԿՄԿ-ի մագիստրանտներին և հետազոտողներին հետազոտական աշխատանքներում ներգրավվածության արդյունավետության բարձրացման, ԳԿՄԿ-ի միջազգայնացման ընդհանուր ռազմավարության համապատասպան միջոցառումների իրականացման հրամայականից:

Սույն քաղաքականության մշակման համար հիմք են հանդիսացել ԳԿՄԿ-ռազմավարական ծրագիրը, հետազոտության ռազմավարությունը:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական հետազոտությունների խթանմանն ուղղված քաղաքականության նպատակն է՝

- գիտության ոլորտում մեծացնել երիտասարդ հետազոտողների հաշվեկշիռը,

- նպաստել բարձր որակավորում ունեցող երիտասարդ հետազոտողների ներգրավմանը գիտակրթական համակարգում,

- ապահովել երիտասարդ հետազոտողների ներհոսքը գիտության ոլորտ,

- խթանել գիտության և արտադրության կապին,

- ստեղծել ծրագրեր, պայմաններ սկսնակ հետազոտողների աճի և զարգացման համար,

- ընդգրկել երիտասարդ հետազոտողներին միջազգային ծրագրերում:

Քայլեր և գործողություններ

1) տեղեկատվության տրամադրում ապրանքի /հետազոտությունների արդյունքի/ կամ ծառայության մասին սպառողներին, ինչպես նաև այլ շահակիցներին, տեղեկատվության հասանելիության ապահովում:

Այս նպատակով նախատեսվում է

ա/հետազոտության արդյունքների ապրանքայնացման քայլերի մշակում,

բ/ շահառուների, շահակիցների և թիրախային խմբերի առանձնացում,

գ/ նրանց համարժեք հասանելի և որակյալ տեղեկատվության ապահովում:

Այս քայլերը անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական և աշխատաշուկայի ներկայացուցիչների շրջանակներում քննարկման հարթակների կազմակերպմամբ, պրեզենտացիաների, կլոր սեղաններ, քննարկումների տարբեր ձևաչափեր, որտեղ պատկերացում կտրվի գիտական աշխատանքի կատարման, արդյունքների ամրագրման և վերջիններս կիրառման մասին:

2) պահանջարկի զարգացում, ավելացում,

Պահանջարկի զարգացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել առկա սոցիալական տարբեր ոլորտներում առկա պահանջարկը, պարզել դրա

խոչընդոտները, ներկայացնել առաջարկ, ինչը կխթանի տվյալ ոլորտի առաջընթացն ու զարգացումը:

3) ապրանքի կամ ծառայության տարբերակում:

Տարբերակման համար անհրաժեշտ է հստակ տարանջատել ներքին և արտաքին սպառման օբյեկտները:

Գիտահետազոտական գործունեությունը հետազոտողների շրջանում խթանելու նպատակով ռեյտինգի հաշվարկման բաղադրատարրերի մեջ անհրաժեշտ է մտցնել նաև հետազոտական բլոկը: Այն իր մեջ պետք է ներառի.
1. հրատարակված մենագրություն,

2. հրատարակված հոդվածներ գրախոսվող պարբերականներում,

3. մասնակցություն և ելույթներ գիտաժողովներում,

4. գիտական արդյունքի ներդրում,

5. հեղինակային իրավունքի արտոնագրի ձեռք բերում,

6. մասնակցություն գիտական գրանտային ծրագրերին:

7.նպաստել սկսնակ հետազոտողների ոլորտի կայուն զարգացումն ապահովող ոլորտի ձևավորմանը:

Թիրախները.

1. ԳԿՄԿ մագիստրատուրայուն ուսումնառություն իրականացնող մագիստրանտներ,

2.ասպիրանտուրայում և հայցորդական համակարգում ընդգրկված հետազոտողներ,

3. կրթության III աստիճանն ավարտած երիտասարդ հետազոտողներ: